

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԱՐԹՈՂՈՄԵՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԵՅ Բ-ԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պապ և Պատրիարք, Նորին Սրբություն **ՊԱՐԹԵՆԻՈՍ Գ-ԻՆ** (Կահիրե),
Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),
Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՄԵՐԿՈՐԻՈՍԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս, Նորին Սրբություն **ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ** (Քոթայամ),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ),
Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՋՈՐՋ ԿԱՐԵՅԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրահայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրահա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Բքերքե),
Միխիթարյան ուխտի ընդհանուր Աթոռակալ Հայր
ԳԵՈՐԳ վարդապետ ՊԱԼՅԱՆԻՆ (Վենետիկ),
Միխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԳՈՃԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը մեր հոգիները լցնում է ուրախությամբ և խորին խոհերով մարդկության երկնագարամյա պատմության մասին:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Սա այն բերկրալի պատգամն է, որ Զատիկը բերում է համայն մարդկությանը:

Այս սուրբ օրը Մենք ևս Եկեղեցու հաղթական ձայնով, նույն պատգամն ենք ավետում Ձերդ Սրբությանը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հղելով Ձեզ Մեր անկեղծ շնորհավորանքները՝ Մեր աղոթքներով և ջերմագին մաղթանքներով, որ կյանքի Տերը օգնական և հովանի լինի Ձեզ, օրհնի Ձեր հովվապետական բոլոր գործերը, պարգևի քաջառողջություն, որպեսզի տակավին երկար տարիներ կարողանաք տոնել Աստվածորդու սուրբ Հարությունը:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է Քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: